ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 35

«04» 05 2020 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 40 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-207-Ն օրենքով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների ցանկը և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի համապատասխան ներքին իրավական ակտում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ ու 7-րդ կետերով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 25-ի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչություններին վերապահված գործառույթները հստակեցնելու մասին» N 40 հրամանի 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչությունը՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով նախատեսված հանցագործությունների, ինչպես նաև այդ հավելվածով չնախատեսված՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 29-րդ գլխում նախատեսված հանցագործությունների մասով.»,

2) 2-րդ և 7-րդ ենթակետերում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149-154.8-րդ» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149-154.9-րդ» բառերով,

3) 3-րդ ենթակետում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 22-րդ գլխում նախատեսված» բառերից հետո լրացնել «(բացառությամբ՝ Հայաստանի

Հանրապետության քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով նախատեսված հանցագործությունների),» բառերը,

4) 4-րդ ենթակետում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 21-րդ գլխում նախատեսված հանցագործությունների մասով» բառերից հետո լրացնել «(բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով նախատեսված հանցագործությունների).» բառերը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ